



ՀԱՅՈՂԻ ԱԿԱԴԵՄԻ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ ՏԵՇԵՍՈՒԾԻՆ ԵՎ ԲՆԵԿԻՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

Ճ. ՏԱՐԻ ԹԻՒ 5.

1852

ՄԱՐՏԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Աշխարհիս անիշտ դարձեր է :

Այդ ուշ սիրելի ընթերցող, կ'ուզե՞ս
դու աս սարսափելի փոսէն ազատ ըլ-
լալ, նախ գիտցիր, թող ամէն լսողներն
ալ իմանան, ինչ որ հիմա պիտի ը-
սեմ. եթէ աս խօսքիս մտիկ ընես, ու
անհոգ ըլլաս, գիտցիր աղէկ որ չուզե-
լուդ պատճառը պիտի ըլլայ անխելքու-
թիւնը, և թէ խօսք հասկընալ չուզո-
ղը, մարդ ալ ըլլալու յոյս չունի : Այս
այսպէս գիտնալով՝ հիմա մտիկ ըրէ այս

համառօտ խրատիս, որով ձանաչմունքդ
շտկուած ձշմարտասէր մարդու կարդ
անցնիս : Այն մարդիկն որ կ'ատես կամ
քեզի թշնամի կը կարծես, հիմա սկսէ
տարակուսիլ անոնց քեզի թշնամի ըլ-
լալնուն և զբեզ ատելնուն վրայ, ու ջա-
նա որ անձամբ անոնց հետ կամ անոնց
բարեկամներուն հետ տեմնուիս, ու ի-
րենց պատճառները լսես, հասկընաս,
և զու ալ քու պատճառներդ իրենց
հասկըցնես : Այս քանի որ մէկը չես
տեսած, և իր գործոց պատճառները

իրմէն կամ իր բարեկամէն չես լսած ,
ու իրեն միտքը չես հասկցած , օտարի
խօսքով անոր վրայ դատաստան մ' ը-
ներ : Աւ այս ալ զգուշացիր որ չըլլայ
թէ անոր թշնամին անոր բարեկամ
կարծելով , ատելոյդ սուտ բարեկամէն
անոր վրայ տեղեկութիւն ուզես : Ա ասն
զի շատ անգամ կը պատահի՝ որ մէկուն
թշնամին իր հակառակորդին աղէկ մը
փառելու համար , քու առջեղ անոր
բարեկամ կը ձեւանայ , ու անոր պաշտ-
պանել ձեւացընելով՝ անոր անունը կը
կոտրէ իր ուզածին պէս : Այսպէս համ
բուրելով մատնիչ ըլլալը թշնամոյն՝ աշ-
խարհիս վրայ նոր բան չէ , ինչպէս որ
յայտնի է . այսպիսի սուտ բարեկամնե-
րու ձեռքով եղած մատնութեան չա-
րիքը գրեթէ անդարմանելի է : Ի՞սա
այս զգուշութիւններով միայն շիտակ
դատաստան կ'ըլլուի , ահա այս է ձշմա-
րիտ բարեկամը և ձշմարիտ թշնամին
իրարմէ զատելու ձամբան : Ոմէ որ կ'ու-
զես աղէկ մարդու վրայ ծուռ դատաս-
տան չընելու՝ պէտք է որ աս ձամբան
բռնես : Խակ թէ որ թշնամիդ առջեղեղ
կեղծաւորելով , սուտեր ըսելով քեզի
բարեկամձեանայ , դու թէ որ զրպար-
տութե՛ դիւրաւ հաւտացող մարդ չես ,
անոր կեղծաւորութիւնն ալ քիչ ժամա-
նակի մէջ կ'իմանաս . և ալ լսւ է գէշի
մը վրայ աղէկ կարծիք ունենալով սխա-
լիլ , քան թէ աղէկը գէշի տեղ դնելով՝
անմեղին արիւնը մօնել : Բաւական է
որ այս զգուշութիւնն ալ ունենաս , որ
աղէկ մը չձանցած մարդուդ հաւտա-
լով բանի ձեռք չզարնես , որ է վերի ը-
սածս , բարեկամի խօսքով չձանցած
մարդու և զգիտցած գործքի վրայ դա-
տաստան ընել :

Աւ այսպէս մէկուն մէկալին խօսքէն
դիւրաւ շխաբուելու համար , և ուրի-
շի վրայ ծուռ դատաստան չընելու հա-
մար պէտք է աս ալ դիտնաս ու հաս-
տատ միտքդ պահէս , որ աշխարհիս մէջ
իրեք տեսակ մարդիկ կան՝ որ մարդուս
ուրիշի գործոց վրայ շիտակ դատաստան
ընելու արգելք կ'ըլլան . Ա . Բարեկամ
ներն ու ազգականները : Բ . Արդաւո-

րեալ սուտ խօսիլ գիտցողները : Գ .
Պարզեւ տուող մարդիկ :

Ի՞ւանին . Բարեկամին ամէն մարդ
շուտով կ'աւտայ , վասն զի՞ներքին բնա-
կան ազդմամբ մարդ միտքը դրած է որ
բարեկամը սուտ ըսեր . որովհետեւ բա-
րեկամութիւնը աղէկութեան վրայ կա-
պած է , բարեկամը ըլլալը իրարու աղէ-
կութիւն ուզել է . ինծի բարեկամ ե-
ղողը ինծի նման մարդ է , իմ աղէկու-
թիւնս կ'ուզէ . իմ աղէկութիւնս ուզո-
ղը , հարկաւ ամէն մարդուն աղէկու-
թիւնը կ'ուզէ . անոր համար ոչ ոքյանձն
կ'առնէ գէշ մարդուն բարեկամը ըլլալ .
ուստի ամէն մարդ կ'աւտայ թէ երբ
բարեկամը ուրիշ վրայ չարիք կը խօսի ,
կը հասկցուի որ իր սրտին ցաւը մարդ-
կային գէշութիւններու վրայ ինձ կը
հաղորդէ : Այս պատճառաւ երբ բա-
րեկամը խարդախ մարդ ըլլայ և կամ
ուրիշ թշնամի ըլլայ , դիւրաւ կրնայ
խարելիր բարեկամը և զնա ալ իր թըշ-
նամոյն դէմ թշնամի ընել : Այնպէս
ալ ազգականները դիւրաւ կրնան խա-
րել զմարդ . վասն զի մարդս բնսկանա-
բար չուզեր որ իր ազգականը գէշ ստա-
սաց մարդ ըլլայ , անոր համար մէկէն
անոր ըսածին կ'աւտայ . և այնպէս կը
յօժարի հաւտալու , որ իր ազգականը
սուտ չելլելու համար , այս չարախո-
սուած մարդուն վրայ անկէ ետև չու-
զեր լսել կամ տեսնել մէկ աղէկ բան
մը . որովհետեւ իր ազգականին ստա-
սաց գտնուիլ իր պատուոյն դէմկը սե-
պէ : Ուստի մարդիկ իրենց բարեկամաց
և ազգականաց խօսքերուն կը հաւտան
իրենց աչքով տեսածի պէս : Բայց այս
ներքին բնսկան զգածմունքը ձշմարտու-
թիւնը հասկընալու ձամբայ չէ . վասն
զի մարդուս զգածմունքը դէռ ուրիշ
շատ անկարգութիւններ ալ կը թերա-
զրէ , բայց մարդս բանաւոր ըլլալով
պէտք չէ որ իր զգածմանը կուրօրէն
հետեւի , այլ մտքովը պէտք է որ աղէկ
մը քննէ , ու թէ որ զգածմանը այսինքն
կամքին ուզածն աղէկ է՝ զայն 'ի գործ
դնէ , իսկ թէ որ գէշ է՝ անկէ հեռա-
նայ :

Արկրորդ գիւրաւ կը խաբեն զմարդիկ կարգաւորեալ սուտ խօսել գիտցողները . վասն զի կան այնպիսի մարդիկ՝ որ ուրիշի վրայ սուտ զբարտութիւն ընելու ատեն՝ այնպիս կարգաւորեալ կը խօսին օրինակներով , պատճառներով , որ կ'ըսես թէ ասանկ կարգաւորեալ խօսքը սուտ չկրնար ըլլալ : Այնպիսի ստասացները անանկ վարժեն սուտը իրաւի տեղ կը լեցը ընելու , որ երբեմն միտքդ առաջուց դրած կ'ըլլաս՝ թէ սա մարդը հիմա պիտի սուտ խօսի , ես զիտեմ , և պիտի չաւտամը ըսածներուն : Այսպիս միտքդ դրած կը սկսիս մտիկ ընել , և այն մարդը կը սկսի իր սուտերը քեզի ծախել . քիչ մը որ առաջ կ'երթայ , դու կը սկսիս մոռքիդ դրածիդ վրայ տարակուսիլ , և քանի որ տարակոյսդ քանի մը բառով իրեն կը յայտնես , այն ստասաց մարդը այնպիս վարպետութեամբ միտքդ հասկընալով , խօսքերուդ առջելը կ'առնէ , որ վերջապիս կը սկսիս հաւտալ , ու մոռքիդ մէջէն ինքզինքդ մեղադրել անոր խօսքերուն չաւտալու պատրաստուելուդ համար : Այս , ինչ մեծամեծ վնասներու , թշուառութիւններու պատճառ եղած են այսպիսի ստասացներ : Անոր համար վերի տուած կանոններէս դուրս ելլելու չէ երբ կ'ուզես չմոլորիլ :

Երրորդ ըսինք պարզե տուողներուն խօսքը անցուկ կ'ըլլայ . որովհետեւ մարդուս բնական է առած բարեացը փոխարէն հատուցումն ընել . պարզեն որ առնես , միտքդ կը կապուի , քեզի պարզք կը սեպէս առած պարզեիդ երախտագէտ ըլլալը . թէպէտ կ'ուզես լելու պատճառները և շիտակն իմանալու , բայց ներքին գաղտնի երախտագիտութեան զգածմունք մը քեզի կը ստիպէտ որ այն պարզե տուողին պատճառները զօրաւոր կարծէս . այնչափ որ քննելն ալ աւելորդ կը սեպէս , մանաւանդ թէ ապերախտութիւն , որ նա քեզի պարզե տալով իր բարեսրտութիւնը յայտնեց , ու դու անոր փոխարէն մը ընելէն ետեւ , բերած պատճառներուն վրայ ալ չես վստահանար , և մինչդեռ նա քեզի հա-

չոյական բան ըրաւ , դու անոր հաճոյիցը դէմ կը մտածէս : Ուստի այսպիսի ներքին զգածմամբ կը սկսիս այն մարդուն վրայ նայիլիքը բարեկամ , իբրեւ բարեսիրտ , ուղղագատ , որ իր շիտակ մտածութեամբ զքեզի պարզեին արժանի սեպէց , քու յարգդ ձանցաւ , որ ըսելէ թէ ուրիշն ալ եթէ անիրաւ եղած ըլլար , ինչպէս որ կ'ամբաստանէ , զայն մարդն ալ պիտի սիրէր , այսպիսի բնական ներքին նախապաշարմունքով , առանց խորունկ մտածելու անոր խորհրդեան կը հետեւիս : Անպատճառ չէ սուրբ զրոց ըաածը՝ թէ կաշառ կուրացուցանէ զաշս : Անոր համար կը տեսնէնք աշխարհիս մէջ՝ որ իր խօսքը առաջ տանիլ ուզողը , ինչ կ'ընէ ընելր , ամէն բանէն առաջ պարզե տալու կը ջանայ : Այսանկով որչափ անիրաւ դաստաններ կը կտրուին :

Հապա թէ որ մէկ մարդ մը աս իրեք և չորս աչք խաբող պարագայները իր վրայ ունենայ , այսինքն ինքն ըլլայ բարեկամ , կարգաւորեալ սուտ խօսող , և պարզե տուող , ու ասանկով սուտ զըրպարտութիւն ընէ , ասանկ մարդուն խաբէն ինչպէս կարելի է ազատիլ : Ինչ և իցէ խելացի մարդ ըլլայ՝ դարձեալ խաբուելու վտանգի մէջ գտնուիլը պէտք է ձանչնայ . անոր համար ընդհանուր կանոննեն երթեք պէտք չէ խոտորիլ , թէ երկու կողմն ալ լսելու է , և այն ալ դարձեալ զգուշանալով՝ որ ըլլայ թէ մէկ կողմը խաբէական հընարքներով իր խօսքը զօրաւոր ցուցընէ :

Հիմա տեսար , սիրելի ընթերցող , թէ մէկ ազգ մը ինչ ապասափելի սխալմունքներու մէջ է , և ինչպէս զիւրաւ պարապ տեղը անհնարին խոռովութիւններու մէջ կը չարչարուի իրարու խօսից և գործոց վրայ սխալ դատաստան ընելով , ձշմարտութիւն կը սիրենք ըսելով , և ամէն բանին շիտակն իմանալու ձամբան չգիտնալով :

Այս անկատար ձանացման և խաբէական ազատութեան երրորդ վնասն է արհամարհութիւն հոգեւոր ձամբուն : Դիմունք որ ամէնքնիս ալ պիտի մեռ-

նինք , ամէնքնիս ալ նոյնպէս հոգի ու նինք , ամէնքնիս ալ լ' պտուծոյ պատկեր ստեղծուած ենք . ամենուս սրտին մէջ կայ փառաց սէր , հանգստեան սէր , շեռոնելու սէր . և սակայն ամէնքը զբաղած աս աշխարհիս մէջ բաներնին կարգի դնելու , վիճակնին շտկելու հետ են : Այսքանի հազար տարուան աշխարհէ է աս աշխարհ . մարդ մը չկայ որ իր բաները կարգի դրած հանգիստ վայլելու սկսած ըլլայ . այլ ասոր ներհակ կը տեսնենք որ նոր բուսած երիտասարդներ կը սկսին մէյմէկ գործքի ձեռք զարնել . ոմանք անկարգ կերպով . ոմանք ալ ջանալով կարգաւորեալ կերպով , որոնց վարմունքը տեսնես , կարծես թէ աշխարհս նոր իրենց հետ սկսեր է , և պիտի գործքերնին կարգի դնեն և աշխարհիս մէջ յաւիտեան հանգիստ կեանք մը պիտի վայելեն : Անդին կը տեսնես չափահաս մարդիկներ , որ հազար բանի ձեռք զարկեր են , ոմանք քիչ մը յաջողեր են , ոմանք դեռ չեն յաջողած . ոմանք ալ ընկեր մեռեր են՝ ձեռք զարկածնին ուրիշի թողլով . ոմանք ալ հիւանդացեր են , բայց նոր պատրաստութեան հետ են , որ եթէ առողջանան պիտի նորէն սկսին սանկընել , նանկընել , բաներնին կարգի դրբել : Ուրիշներն ալ կը տեսնես որ տարիքնին առաջ զացեր է , գործքերնին ուրիշ առաջ հօն մնացեր է , բայց իրենք այսօրուան վաղուան ըլլանին չյիշելով , նոր հնարքներ մտածելու հետ են բաներնին շտկելու համար : Ոմանք ալ բաներնին առաջ տարեր են , բայց փափաքնին աւելի շատցեր է՝ ալ մեծ բաներու ձեռք զարնելու ու իրենք զիրենք աւելի կարգաւորելու : Ուշմայլ կը տեսնես որ մէկը մէկալը սանկն նանկ կարգաւորեմ ըսելու ատեն , ամէն բաներուի վրայ կը թողուն կը մեռնին կ'երթան . ուրիշները անոնց կարգաւորածներուն վրայ կը վազեն , անոր կարգաւորութիւնները իրեն հետ մէկ տեղ կը թաղեն : Այսպէս խառնաքնդոր շարժմանք մը կ'երկենայ աշխարհիս երեսը անդադար . մէկը կ'ելէ մէկը կ'իջնայ կը

լմբննայ . բայց ամենուն վրայ կը տեսնուի մէկ անօդուտ ջանք մը ելելու , և առանց իջնալու հաստատ մնալու : Ո՞ւ կը ինդալով կու գայ կ'երթայ . մէկալը լալով կը լմբննայ . սա զրկելով ինքն ալ կեանքէն կը զրկուի կը պակսի , նա զըր կուելով օրերը կը լմբնացընէ կը մեկնի . մէկը պարծելով վերջապէս 'ի հող կը խոնարհի . մէկալը թուգումնուր ուտելով կը մարի կ'անյայտի : Ո՞ա կը խրոխտայ ծովլ ցամաք , ցամաքը ծովլ փոխելու , և խրոխտալու ատեն ինքը 'ի հող կը փոխուի . նա մէկէն մէկալէն վախնալով զգուշանալով մահուանէ կը բըռնուի . ուրիշ մը ինձ ովլ ինչ կրնայ ընել ըսելու չմնար , ժամանակ չունենար ուրիշին ըրածը տեսնելու , ինքն անշունչ փոյտ կը գառնայ : Ի՞նչ ըսեմ . հովէն ծառին տերևները թափելու պէս , մէկ կողմանէ կը բուսնին , մէկալ կողմանէ , պզտի , մեծ , հովին դէմ կենալու ջանքովլ քիչ մը ատեն շարժը շտկելէն ետեամէնքն ալ կը թափին , ոչ մէկն ալ իրենց տեղը չեն մնար :

Այսպիսի խառնակութեան մէջ ամէնքն ալ փառք հանգիստ փնտուելու հետ ըլլալով ինչպէս չեն տեսներ թէ փառաւոր հանգող մարդիկ շատ կան աշխարհիս մէջ և թէ իրենք ալ ուզեն չուզեն պիտի հանգչին անոնց հետ : Կերեզմաննոցներէն անցնելու ատեն , մէյմը չորս դինին չեն նայիր , չեն տեսներ , չեն իմանար , որ հօն բիւրաւոր մարդիկ ամէնքը մէկ տեղ խաղաղ հանգիստ պառկած կեցեր են : Կակ թէ որ իրենք փառք ալ մէկ տեղ կ'ուզեն ունենալ , այն ալ դարձեալ հօն կրնան գտնել և ունենալ թէ որ ան հանգող մարդիկներուն հարցնեն : Աշխարհիս վրայ թագաւոր և կայսր ըլլալէն ուրիշ մեծ փառք կայ . գերեզմաններուն մէջ թագաւորներ , կայսերներ ալ կան , թող անթիւ մեծամեծ իշխանները . մարդկանց ազատ իշխանութիւն տրուած է . ովլ ով իշխաննին , ովլ թագաւորին փառացը կ'ուզէ հաւասարիլ , թող երթայ անոր աթուակից ըլլայ . երթայ թողբանայ ան իշխաննին ,

ան թագաւորին, ան կայսեր գերեզմանը, ու հոն պառկի : Շատերուն մէջէն յիշեմառջինը՝ Եբրովլթը, կ'ուզես իրեն աթոռակից ըլլալ, իրեն հանգըստեան և փառացը որ վաստըկեցաւ, և հիմա վայելելու հետ է, կ'ուզես անոր հաղորդ ըլլալ, բաց իրեն գերեզմանը, մտի մէջը ու հանգչէ անոր հետ. վասն զի դու ինքիրէդ որչափ ալ աշխատիս մեծ մարդ ըլլալու, հանգիստ վայելելու, անոր շուքին ալ չկարենաս պիտի համնիլ. վաղը մահը պիտի գայ՝ բոլոր աշխատանքդ պարապը պիտի հանէ : Ի՞չա արդէն աշխատած մեծամեծ մարդիկներ զքեզ կը հրաւիրեն՝ որ երթաս իրենց փառացը և հանգատեանը հաղորդ ըլլաս : Իսկ թէ թաղուիլ չես ուզեր, այդ անկարելի է, վերջապէս քիչ տարիէն ուզես չուզես պիտի թաղուիս, և հոն յաւիտեան պիտի վայելես փառագդ և հանգիստդ. ամէն թշնամիներուդ ձեռքէն ալ պիտի ազատիս . և ամէն թշնամութիւններդ ալ դու ձեռքէ պիտի թողուս ու հանգչս . . . Իչ կ'ըսեմ ես կը լսեմ, ինձ մտիկ լնող չկայ :

Տես սա մարդս տարիքը չափաւոր առեր է, անկողին ընկեր է, հիւանդութիւնը վտանգաւոր է, տնուորները կ'ուզեն որ կերպով մը իրեն հասկըցնեն որ մեռնելու պատրաստութիւն տեսնէ . բժիշկը յոյսը կտրեր է, տնորդիք գաղտուկ կուլան . իսկ ինքը առողջանալու օրերը համրելու հետ է : Ի՞յաօր երեկուընէ քիչ մը աւելի ծանրացայ, գէշ կ'իմանամ, բայց բան չէ . այն հիւանդութեան կարգն է, ուժը պիտի առնէ . կը յուսամոր երկու օրէն կը սկսիմ վըրայ դնել: Աիրակոս, փոխանակագիրներ կար պահանջելու, օրը այսօր մընցաւ, չմոռնաս, գնա այսօր ուզէ . և զիտցիր որ հարիւրին կէս ալ վրայ պիտի տայ, չըլլայ թէ առնես առանց կէսերը վրայ դնելու . եաքը նայէ, վաճառականի նաւ մը եկեր է, ինչ ապրանք բերեր է, գնա իմացիր ու ինձ լուրը բեր շուտ : Այս ստակներն ալ երկու ամիս է որ առանց շահու մնացին, կ'ուզեմ մէկ իսանութի մը կամ տան մը վրայ պառ-

կըցնել. բայց կ'ուզեմ որ քարուկիր ըլլայ, որպէս զի կորսուելու վտանգ չըլլայ . մէյմը ոտք ելլեմ, ալ աղէկ կարգի պիտի դնեմ ամէն բան . անանկ որ ես ալ որդիքս ալ ասկէ վերջ հանգիստ կարենաք ապրիլ. քիչ մըն ալ հանգիստ կեանք անցընենք, վաստակին ծայրը չգար :

Ի՞ս սուտ յոյսն է որ զամէնքը կը խաբէ . բայց հոս տեղս խարելը սխալ խօսք է . յայտնի բանին դէմ երգոր մէկը կ'ընէ, այն խաբուիլ չէ : Ի՞սկէ յայտնի բան չկայ որ ամէնքը կամ շուտ կամ ուշ, հարիւր տարին չհասած պիտի մեռնին, և քանի որ կ'ապրին այն շահելու, դիզելու կարգաւորելու հոգէն պիտի չի դադրին, և տղաքն ալ իրենց դիզած կարգաւորածը պիտի մնղեն ցրուեն, ու իրենք նորէն աշխատին քրտնին, և վատրկելու . կարգաւորելու հոգը սրտերնուն մէջ անոնք ալ պիտի մեռնին . աշխարհիս կարգը այս է : Ի՞ցքատ, հարուստ, նեղութեամբ, հանգստեամբ ըրածնին և աշխատածնին ուրիշ բան չէ, բայց եթէ մեռնելու պատրաստութեան այլ և այլ ձամբաներ : Ի՞այց ամենուն ալ խելքը և դիտմունքն է չմեռնիլ, հանգիստ ապրիլ: Ի՞մէնքն ալ կը փորձեն որ ետքը չգար . ամէն բան երեսի վրայ կը թողուն կ'երթան, և դարձեալ ամէնքն ալ երկար ապրելու յուսով, և միշտ առանց գոհ ըլլալու իրենց վիճակին կ'աշխատին, մէյմ՝ ալ առանց իմանալու յանկարծ մահուան դուսը կը հասնին . յանկարծ սրտերնին դող կ'ելլէ . վայ, ինչ պիտի ըլլամ . արդեօք առողջանալու ձար մը գոող չկայ մի . սա, նա բժիշկը կանչէիք ըսելու չմար . մէյմ՝ ալ զրեր ես նէ գտի, քովինները կը նային, շունը դադրեցաւ : Աիրակոսն եկեր է փոլցային և վաճառականի նաւուն լուրերը բերեր է . որու : Ի՞ցան ձամբորդ մըն էր յաշխարհ եկաւ ու դնաց . այն ամէն աշխատանքները, մոածմունքները, հոգնիները իրեն համար չէր, այլ ձեզի երջանկութիւն պատրաստելու համար կ'ընէր . ձեզի համար որ պիտի չմեռնիք, այլ

պիտի հանգիստ վիճակ մը գտնէք, ու յաւիտեան աշխարհս պիտի վայելէք . դուք հիմա նայեցէք որ աղէկ կարգի դնէք, ու հանգիստ վայելէք : || 5 , սուտ յոյս . գիտցէք որ մեռնողն ալ ատենօք ձեզի պէս վայելքի յոյսերով լցուած երիտասարդ մըն էր, շտկեմ, վայելէմ ըսելու չմնաց կարճ կեանք մըն էր գլորեցաւ, անցաւ, լմբնցաւ . մի կարծէք թէ դուք անկէ երկար պիտի ապրիք :

(ՄՆԱՑԱԽ ՈՒՐԻԾ ԱԿԴԱՄ)

ԲԱԵԼՍԻՐԱԿԱԽՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՏՐԱՅԻ ՄԷՃ ԱՌԱԽՈՏ ՄԸ

ԿԱՄ

ՊԵՏՊԱՆՈՂԱԿԱԽՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԿՈՒԾԱԽՆ
ԸՆԿԵՐԱԿԱԽՆՈՒԹԻՒՆ :

“ Ի՞նչո՞ւ հիմա ուրիշ գլուխ մը կարդալու, որուն մէջ պիտի տեսնաս կրօնական, մարդասիրական և բարոյական սկզբամբ հաստատուած ընկերութիւններ, ժողովրդեան մոլութիւններուն, ցքաւորութիւններուն ու հիւանդութիւններուն առջեն առնելու համար : Ինաւական կը համարիմ միայն անոնց անունը քեզի կարդալ . տարակոյս չունիմ, որ այս բարեպաշտական ընկերութիւններուն անունները միայն կարգաւ լսես, կը նաև մակաբերել թէ ինչ մանրամասն գործնական խնամքներ, և որչափ շատ ու տեսակ տեսակ նիւթական ու բարոյական նպաստներ լնելու նպատակով հաստատուած են । ոնտրայի մէջ այս կամաւոր ընկերութիւնները : Ի՞ս սահմանադրութիւններուն ամէնն ալ այս դարուն գործն են, և աւելի այս վերջի մէկ քանի տարիներուն, որ խրատներով ու խոհեմութեան օրինակներով լեցուն են : Ի՞ս ընկերութիւններուն տարուէ տարի ժողված կամաւոր տուբքերը, միայն ստակ ըլլա-

լով, յիսուն միլիոնը կ'անցնին, առանց գործով նպաստները հաշուելու : Ի՞ն ասոնց անունները :

“ Ընկերութիւն՝ մարդոց կեանքը ամէն տեսակ պատահարներէ պահպանելու, այսինքն ջրէ, կրակէ, և ուրիշ ասոնց նման վտանգներէ :

“ Ընկերութիւն՝ յանկարծ հրդեհի մէջ գտնուող անձանց կեանքը ազատելու համար :

“ Ընկերութիւն՝ կենդանեաց չարացը գործածուելուն դէմ, որով մարդիկ վայրագ ու կատաղի կ'ըլլան, և խեղձ կենդանիները որ մեր կենաց օժանդակներն են, պատժաւորներու պէս կը գործածուին մեզի ըրած օգտակար ծառայութիւններնուն փոխարէն :

“ Ընկերութիւն՝ երկրագործաց վիճակը լաւցընելու համար :

“ Ընկերութիւն՝ գործաւորաց կարգերուն մէջ ուսումն տարածելու համար :

“ Ընկերութիւն՝ լ ոնտրայի ժողովարդեան առողջութեան վիճակը լաւցընելու համար :

“ Ընկերութիւն՝ ժողովրդեան մէջ մաքրութեան խնամք տարածելու համար, լ ոնտրայի բազմամարդ ու աղքատ թաղերուն մէջ ձրի կամ խիստ վար գնով բազնետուններ բանալով, ուր լըւացարաններ ու լաթ չորցընելու համար տաք տեղեր ալ կան, որպէս զի աղքատ կնիկներն ու փոխելու կտաւիք չունեցող մարդիկ կարենան ձրի կամ մէկ երկու պղինձ տալով լուացուիլ, և իրենց կամ իրենց ընտանեաց կտաւիքը լուալ ու չորցընել :

“ Ընկերութիւն՝ գործաւորաց և մանր մունք բան ծախող խանութպաններուն դիւրութիւն տալու համար, որ կարենան իրենց գործարանները կամ խանութները կանուխ գոցել ու իրիկուան ժամերը օգտակար գրքեր կարդալով և ընտանեկան պարապմունքներով անցընել, որ իրենց վարուցն ալ առողջութեանն ալ միամնգամայն օգտակար է :